Հաստատված է:

Երևանի Մ. Խորենացու անվան
Հ. 143 հիմնական դպրոցի
Տնօրեն՝ Կ. Կոստանյան

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

# ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Երևանի Մովսես Խորենացու անվան 143 հիմնական դպրոց
IX ա դասարան

Դասղեկ՝ Սոնա Բալյան (Սարգսյան)

2023–24 ուստարի

Դասարանի ընդհանուր բնութագիրը- Դասարանի կազմը՝ 19 աշակերտ, տղա- 9, աղջիկ-10 Դասարանը համախմբված է, տիրում է առողջ և ջերմ մթնոլորտ: Աշակերտները ընկերասեր են, աչքի են ընկնում միմյանց օգնելու բարձր գիտակցությամբ:

| | **Աշակերտների ազգանուն,անուն, հայրանուն** | **Արտադասարանական գործունեությունը** |
|---|---|---|
| 1. | Աթաբեկյան Վալերի Արկադի | |
| 2. | Աբգարյան Հրանտ Ստեփանի | կիթառ |
| 3. | Բաբայան Հրանտ Արտյոմի | պար |
| 4. | Դումանյան Մանե Ազատի | բասկետբոլ |
| 5. | Խարազյանց Վերոնիկա Արարատի | |
| 6. | Կարապետյան Արսեն Վահանի | բռնցքամարտ |
| 7. | Հակոբյան Կարեն Հայկի | բասկետբոլ |
| 8. | Հովհաննիսյան Միքայել Տիգրանի | բասկետբոլ |
| 9. | Ղումաշյան Շուշան | |
| 10. | Մանասյան Արամ Արմեն | դիոլ |
| 11. | Դավթյան Էլյա Գեորգիի | |
| 12. | Մարտիրոսյան Միլենա Արթուրի | |
| 13. | Ներսիսյան Ալլա Արմեն | կիթառ |
| 14. | Շահինյան Եվա Ֆելիքսի | |
| 15. | Պողոսյան Անգելինա Ալեքսանի | |
| 16. | Պողոսյան Վանուշ Վահանի | սուսերամարտ |
| 17. | Սարգսյան Դավիթ Սամվելի | |
| 18. | Սիմոնյան Ալիսա Հենրիկ | պար |
| 19. | Վարտանյան Արուսյակ Հրանդի | |

**ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՀԱՅԵՑԻ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Դասարանում ստեղծել լավ մթնոլորտ: Սովորեցնել հարգել միմյանց, լինել ազնիվ, ճշտախոս, պատասխանատու, միշտ պատրաստ օգնելու ընկերոջը: Խոսել հայրենասիրության մասին, սերմանել հայրենաասիրություն:

## ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Երեխաների մոտ գեղագիտական ճաշակը զարգացնելու նպատակով, սովորեցնել գտնել ու տեսնել գեղեցիկը: Հաճախակի կազմակերպել էքսկուրսիաներ և այցելություն թանգարաններ, կազմակերպել տարիքային կինոդիտումներ և այցելություն մշակույթային այլ կենտրոններ: Կազմակերպել բաց քննարկումներ: Հաճախ այցելել թանգարաններ ու պատկերասրահներ, կազմակերպել ստեղծագործությունների քննարկումներ :

## ՌԱԶՄԱ-ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հաճախակի կազմակերպել զրույց- քննարկումներ հայրենասիրական թեմաներով: Կազմակերպել միջոցառումներ, բաց դասեր՝ նվիրված պատմական կերպարներին,Հայոց բանակի կազմավորմանը :Խոսել մերօրյա հերոսների մասին, կազմակերպել էքսկուրսիա պատմական վայրեր ( Եռաբլուր, Սարդարապատ...):

Դիտել հայրենաիրության ու արիության ոգով տոգորված ֆիլմեր ու հաղորդաշարեր, կազմակերպել զրույց –քննարկումներ:

## ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հետևել աշակերտների հիգիենային, շարժումներին, ճիշտ նստելու, գրատախտակից համապատասխան հեռավորությունից օգտվելու և նմանատիպ հարցերին: Դասերին ծանրաբեռնվածությունը թոթափելու, մկանային լարվածությունը թուլացնելու նպատակով կազմակերպել ֆիզիկական վարժություններ: Հետևել աշակերտների մասնակցությանը ֆիզկուլտուրայի դասերին:

Անգամ կարելի է մի քանի րոպե ընդհատել դասը, հանձնարարել լիցքաթափող վարժանքներ:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Դասարանում պահպանել մաքրությունն, կարողանալ գնահատել իր և ընկերոջ կատարած աշխատանքը, պահպանել և անհրաժեեշտության դեպքում վերանորոգել գույքը: Ձևավորել բարեխիղճ վերաբերմունք դեպի աշխատանքը:

## ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտները պետք է հասկանան ու գիտակցեն բնության կարևորությունը, սիրեն և պահպանեն այն: Մաքուր պահեն շրջակա միջավայրը: Մեծ ցանկությամբ և ջանասի-րաբար մասնակցեն շաբաթօրյակներին և ծառատունկին: Անցկացնել զրույց «Ես բնության մի մասնիկն եմ» թեմայով: Պահանջել անհատական շփում բնության հետ, բնության գրկում:

ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊ

Ապահովել դպրոց-ընտանիք կապը ծնլայն օրագրի միջոցով: Հանդիպումներ կազմա-կերպել դասավանդող ուսուցիչների և ծնողների միջև: Հատկապես մեծ ուշադրություն դարձնել չառաջադիմող աշակերտներին և կապ պահպանել նրանց ծնողների հետ:

***Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուսպարվա ընթացքում.***

1. ՈՒշադրության կենտրոնում պահել և մշտապես հետևել դպրոցում սահմանված կարգ ու կանոնին:
2. Կարևորել մաքրությունը, անձնական հիգիենան,կարգապահությունը և ճշտապահությունը:
3. Դրական վերաբերմունք ձևավորել ընտանեկան սովորույթների,ազգային ավանդույթների նկատմամբ:
4. Դպրոց-ընտանիք կապը անցկացնել միջոցառումներ ծնողների և աշակերտների մասնակցությամբ:Ծնողներին ներգրավել բոլոր տեսակի դասարանական աշխատանքների մեջ:

**ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**I կիսամյակ**

| № | Թեման | Նպատակը | Ամսաթիվ |
|---|---|---|---|
| 1 | Գիտելիքի օր | | 1. 09. 23թ |
| 2 | Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում: Կազմակերպչական հարցեր: | Հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները: | |
| 3 | 15-րդ գարունը | | |
| 4 | Անկախության անգնահատելի դերը իմ կյանքում | Ձևավորել սեր առ հայրենիք: | |
| 5 | 2020թ. -ի Արցախյան պատերազմը. ես որպես պատմագիր | Աշակերտները փորձում են որպես պատմագիր ներկայացնել Արցախյան պատերազմը՝ ինչպես կներկայացվեր «Հայոց պատմության» դասագրքերում: | |
| 6 | Ժամանակի ճիշտ կառավարում | Ժամանակի ճիշտ պլանավորման և կառավարման, առաջնային և երկրորդային գործողությունների դասակարգման և իրականացման հմտությունների ձևավորում: | |
| 7 | Ինչպես կողմնորոշվել բարդ իրավիճակներում | Զարգացնել տրամաբանություն,սովորեցնել որոնել ուղիներ բարդ իրավիճակներից դուրս գալու ,կողմնորոշվելու դժվար իրադ-րություններում: | |

| | | | |
|---|---|---|---|
| 8 | Հանդիպում հոգեբանի հետ | Անկեղծ զրույց | |
| 9 | Համակարգիչն ընկեր,թե՞ թշնամի | Հասկանալ, թե ինչ դեր ունեն համակար-գիչը, հեռախոսը, ժամանակակից տեղե-կատվական տեխնոլոգիաները աշակերտի կյանքում, տարբերակել դրանց դրական և բացասական կողմերը: | |
| 10 | Ես էլ քեզ նման . . | Ձևավորվում է ինքնահարգանք, դիմացինի նկատմամբ,դրսևորվում է անձերի համեմատություն և հավասա-րություն: | |
| 11 | Ինչպես ապացուցել քո ճշմարտացիությունը | Սովորել խոսել միայն ճիշտ փաստերով, առողջ բանավիճել, ապացուցել սեփական ճշմարտացիությունը,ընդունել դիմացինի կարծիքը: | |
| 12 | գիտե՛ն որ . . . | Սովորողները միմյանց ներկայացնում են հետաքրքիր փաստեր ամենատարբեր երևույթների մասին,որոնց մասին քչերը գիտեն, ստանում են նոր ինֆորմացիա: | |
| 13 | Առաջադիմության հետ կապված հարցերի քննարկումներ | | |
| 14 | Ինչպե՞ս չկորցնել հարազատ մարդկանց վստահությունը | Սովորողները վերանայում են իրենց քայլերը, արարքները, իրենց փոխհարա-բերությունները հարազատ մարդկանց և շրջապատի հետ: | |
| 15 | Պահպանված և չպահպանված հին ավանդույթներ (հայերի Ամանորը) | Սովորողները զրուցում են հին հայկական ավանդույթների մասին, ծանոթանում են այն տարրերին,որոնք ներկայումս չեն պահպանվել,ամրապնդվում է ազգային գիտակցությունը: | |

**II կիսամյակ**

| | | | |
|---|---|---|---|
| 1 | I կիսամյակի ուսումնական արդյունքների վերանայում:<br>II կիսամյակի անելիքներ , կազմա-կերպչական հարցեր: | | |
| 2 | Ազնիվ և անկեղծ հարաբերու-թյունները մեր դասարանում | Ձևավորվում է ինքնահարգանք, հարգանք դիմացինի նկատմամբ,դրսևորվում է անձերի հավասարություն, միմյանց վստահելու կարողություն: | |
| 3 | Հանդիպում բուժքրոջ հետ | Զրույց առողջապահության,<br>հիգիենայի շուրջ | |

| | | | |
|---|---|---|---|
| 4 | Հայոց բանակ ։ Հայրենի՛ք ,ես զարկն եմ քո բազկի ։ Հանդիպում զինղեկի հետ։ | Զրույցի միջոցով յուրաքանչյուր աշակերտի գիտակցության մեջ սերմանել սեր, հարգանք դեպի Հայոց Բանակ։ | |
| 5 | Կարգապահության և առաջադի-մության խնդիրների քննարկում | | |
| 6 | Եկեղեցին և ազգը։ Տեառնընդառաջ տոնի խորհուրդն ու ծիսակատարությունները ։ | Քննարկման միջոցով հիմնավորել եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում։ Խոսել Սուրբ Սարգսի տոնի մասին | |
| 7 | «Վստահիր գրքերին, նրանք ամենամտերիմներն են. նրանք լռում են, երբ պետք է և խոսում են, երբ պետք է՝ անհրաժեշտության դեպքում բացելով ձեր առջև աշխարհը» Էռնեստ Հեմինգուեյ | Թումանյանի հետ։ «Գիրք նվիրելու» խորհուրդը։ | |
| 8 | «Պատասխանատու քաղաքացի» | Քննարկել յուրաքանչյուր անհատի, քաղաքացու դերի և նշանակության մասին մեր հասարակության մեջ | |
| 9 | Մայրության և գեղեցկության տոն | | |
| 10 | «Մոլորակի ժամ» | Մարտի 19-ին ամբողջ աշխարհում նշվում է Մոլորակի օրը։ Դրա շրջանակներում մարդիկ մեկ ժամով անջատում են իրենց տան լույսերը։ Քննարկել պատճառները։ | |
| 11 | Դեպքեր նշանավոր մարդկանց կյանքից | Յուրաքանչյուրը կներկայացնի որևէ հայտնի մարդու կյանքի պատմությունը, որն էլ կդառնա համընդհանուր քննարկման թեմա։Աշակերտները կսովորեն չընկճվել ձախողումներից և հաղթահարել դժվարու-թյունները։ | |
| 12 | «Կարո՞ղ եմ օգտակար լինել» | Այս թեման հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել բարի և դրական հատկանիշներ։ | |
| 13 | «Պետք է արդյոք խնայել» | Խթանել աշակերտների ստեղծագործական մտածողությունը, ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք | |
| 14 | Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր | | |
| 15 | «Երազում դառնալ. . . . » | Քննարկումներ ապագա մասնագիտության ընտրության շուրջ։ | |
| 16 | «Ո՞վ է հոգեպես հարուստ իմ կարծիքով» | Սովորել դասակարգել կարևորը անկարևորից և արժևորել կարևորը։ Ձևավորել արժեհա-մակարգ,կատարել ինքնավերլուծություն։ | |

| | | | |
|---|---|---|---|
| 17 | Ուսումնական տարվա ամփոփում. «Ի՞նչ եմ տանում այս տարի ինձ հետ դպրոցից»: | Քննարկել անցնող ուսումնական տարվա ձեռքբերումները, հետաքրքիր պահերը և դպրոցի դերն ու նշանակությունը այդ ամենի մեջ: | |
| 18 | « դաս» թեմայի շուրջ | Քննարկել, թե ինչպես անցկացնել այն | |
| 19 | «Վերջին զանգ» խորագրով ցերեկույթի կազմակերպում | | |